

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-14/24-I/INSTBOT

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ  
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐԸԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Արսեն Հակոբի Գասպարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 239 595 884 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց.

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

### **3. Ծրագրի ֆինանսավորման չափը**

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 239 595 884 ՀՀ դրամ:

### **4. Մշտադիտարկում**

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

## 5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

## 7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:


## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա  
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Կազմակերպություն  
ՀՀ ԳԱԱ «Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության  
ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24  
Հ/հ՝ 900011024115  
ՀՎՀՀ՝ 00005673  
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Աճառյան փ. 1 Ավան 0063 Երևան Հայաստան  
Հ/հ՝ 900018005372  
ՀՎՀՀ՝ 00805541  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝  
  
(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ



Ծրագրի գիտական ղեկավար՝

  
(ստորագրություն)

Կազմակերպության տնօրեն՝

Արսեն Հակոբի Գասպարյան

Գասպարյան Արսեն Հակոբի

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սադյանը և Կազմակերպության տնօրեն Արսեն Հակոբի Գասպարյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-14/24-I/INSTBOT պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 239 595 884 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

**Ակադեմիա**

Նախագահ՝

  
(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱԴՅԱՆ



**Կազմակերպություն**

տնօրեն՝



ԱՐՏԵՆ ՀԱԿՈԲԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ



**ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ**  
 «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	20
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	25
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	10
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	10
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	3
Գրքեր, մենագրություններ՝	2
Գիտաժողովի նյութեր՝	12
Արտոնագրեր՝	1

Կազմակերպության տնօրեն՝

Կազմակերպության գիտքարտուղար՝



Մուսես Հակոբի Գասպարյան

Հովակիմյան Ժաննա Հովիկի

Կ. Տ.

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	181 366 740	36 273 348	45 341 685	45 341 685	54 410 022
2.	տնտեսական ծախսեր՝	55 413 144	11 082 628	13 853 286	13 853 286	16 623 944
3.	այլ ծախսեր՝	2 816 000	563 200	704 000	704 000	844 800
Ընդամենը՝		239 595 884	47 919 176	59 898 971	59 898 971	71 878 766

Կազմակերպության տնօրեն՝



Արմեն Հակոբի Գասպարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝



Անուշ Ատնի Բարաջանյան


Կ. Տ.

**ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ**

«Ն դրամ»

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	<b>Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝</b>	<b>55 413 144</b>
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	2 950 000
2.	գազի ծառայություն	6 300 000
3.	ջրամատակարարման ծառայություն	2 200 000
4.	կապի ծառայություն	182 944
5.	աղբահանություն	150 000
6.	ոռոգում	3 500 000
7.	ինտերնետ	130 200
8.	պահնորդական ծառայություն	40 000 000
	<b>Այլ ծախսեր, այդ թվում՝</b>	<b>2 816 000</b>
1.	Սեզոնային բանվորներ /Երևան- 3 հոգի/, ապրիլ-հոկտեմբեր /7ամիս/	2 016 000
2.	Սեզոնային բանվոր /Սևան- 1 հոգի/, մայիս-օգոստոս /4 ամիս/	416 000
3.	Սեզոնային բանվոր /Վանաձոր - 1 հոգի/, մայիս-օգոստոս /4 ամիս/	384 000

Կազմակերպության տնօրեն՝

  
 (ստորագրություն) Հրաչյա Հակոբի Գասպարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

  
 (ստորագրություն) Ստյոյ Լևոնի Բարաջանյան  
  
 Կ. Տ.



**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)      D - աշխատաժամանակի շարաքական տևողություն (ժամ)  
B - ամիսների քանակ      E - գումարային  
C - աշխատաժամանակի ոճժիմ

«Հ դրամ»

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
<b>Վարչասպասարկող անձնակազմ</b>						
Գասպարյան Արսեն Հակոբի	տնօրեն	500 000	12	հիմնական	40	6 000 000
Ղուկասյան Անահիտ Գեորգիի	Փոխտնօրեն	400 000	12	հիմնական	40	4 800 000
Վարդանյան Ժիրայր Հմայակի	գիտական-ղեկավար	155 000	12	ներքին համատեղություն	20	1 860 000
Հովակիմյան Ժաննա Հովիկի	Գիտական քարտուղար	350 000	12	հիմնական	40	4 200 000
Բաբաջանյան Անուշ Լևոնի	ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍՊԸ-ի Լիազոր ներկայացուցիչ	0	12	հիմնական	40	0
Մելքոնյան Գոհար Ալբերտի	անձնակազմի կառավարման մասնագետ	140 000	12	հիմնական	40	1 680 000
Ղարիբյան Մարգարիտա Գրիշայի	գրադարանավար, առաջատար մասնագետ	96 000	12	հիմնական	40	1 152 000
Բոգդանյան Աշոտ Մկրտչի	վարչատնտեսական և անվտանգության բաժնի վարիչ	145 000	12	հիմնական	40	1 740 000
Նազարյան Հարություն Մարտունի	մեխանիկ-վարորդ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Արսիսանյան Ազիզ Ռազմիկի	էներգետիկ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Արասիսանյան Նորիկ Շեկոյի	փականագործ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Շատոյան Նորիկ Հմայակի	Փոխտնօրեն այգու գծով	190 000	12	հիմնական	40	2 280 000
Փայտյան Յուրիկ Ենոքի	գյուղատնտես	120 000	12	հիմնական	40	1 440 000
Ղուկասյան Գրետա Սերգեյի	առաջատար մասնագետ	97 000	12	հիմնական	40	1 164 000
Մարդանյան Յուրիյ Նիկոլայի	այգեգործ-բանվոր	97 000	12	հիմնական	40	1 164 000
Տեր-Ղուկասյան Անուշ Երվանդի	այգեգործ-բանվորուհի	97 000	12	հիմնական	40	1 164 000
Միխայիլովա Ելենա Սերգենա	այգեգործ-բանվորուհի	97 000	12	հիմնական	40	1 164 000
Պետրոսյան Աղվան Սուրենի	այգեգործ-բանվոր	97 000	12	հիմնական	40	1 164 000
Հովակիմյան Հարություն Հովիկի	Վանաձորի բաժանմունքի վարիչ	125 000	12	հիմնական	40	1 500 000
Ղամբարյան Ռաֆայել Արմենի	Վանաձորի բաժանմունքի այգեգործ-բանվոր	105 000	12	հիմնական	40	1 260 000
Ղամբարյան Արմեն Անուշավանի	Վանաձորի բաժանմունքի այգեգործ-բանվոր	97 000	12	հիմնական	40	1 164 000
Մնացականյան Սիմոն Միխայելի	Սևանի բաժանմունքի վարիչ	125 000	12	հիմնական	40	1 500 000

Մանուկյան Արմեն Արտավազի	Սևանի բաժանմունքի այգեգործ-բանվոր	97 000	12	հիմնական	40	1 164 000
Ավագյան Դավիթ Ժիրայրի	Սևանի բաժանմունքի այգեգործ-բանվոր	105 000	12	հիմնական	40	1 260 000
Հովհաննիսյան Լուսյա Նուրիջանի	բուսապահոցի տեխնիկ	96 000	12	հիմնական	40	1 152 000
Օհանյան Շուշան Հրանտի	տեխնիկ	96 000	12	հիմնական	40	1 152 000
Հարությունյան Աղունիկ Վիլիեմի	ծաղկաբույծ-մասնագետ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Խլեբնիկովա Սեծաննա Իզորի	Էկոլոգիկենտրոնի էքսկուրսավար	120 000	12	հիմնական	40	1 440 000
Բայբուրդյան Անի Վաչագանի	տնօրենի օգնական ընդհանուր գծով	174 000	12	հիմնական	40	2 088 000
Վարոսյան Սամվել Սերգեյի	Իրավաբան	140 000	12	հիմնական	20	1 680 000
Դուտովա Ջոյա Վիկտորի	Տնկարանի վարիչ	130 000	12	հիմնական	40	1 560 000
Աբրահամյան Սերգեյ Գրիգորի	այգեգործ-բանվոր	97 000	12	հիմնական	40	1 164 000
Թումասյան Ժենյա Արարատի	տնօրենի օգնական	104 000	12	հիմնական	40	1 248 000
Միրզոյան Մանուշ Շահենի	էքսկուրսավար	0	12	հիմնական	40	0
Բարսեղյան Մարիամ Վահանի	հավաքարար	115 000	12	հիմնական	40	1 380 000
Արզումանյան Արսեն Էդիկի	Սեխանիզատոր	0	12	հիմնական	40	0
Գասպարյան Արմեն Գեորգիի	Օժանդակ առաջխառտակից. հսկիչ	0	12	համատեղություն	20	0
Բոզդանյան Կարինե Սկրտիչի	այգեգործ բանվոր	97 000	12	հիմնական	40	1 164 000
<b>Գիտական անձնակազմ</b>						
<b>Բաժին</b>						
<b>Երկրաբուսաբանության և էկոլոգիական ֆիզիոլոգիայի բաժին</b>						
Ֆայվուշ Գեորգի Մարկի	Ղեկավար	449 800	12	հիմնական	40	5 397 600
Ալեքսանյան Ալյա Սամվելի	Ավագ գիտաշխատող	75 070	12	համատեղություն	10	900 840
Հովակիմյան Ժաննա Հովիկի	Ավագ գիտաշխատող	150 150	12	ներքին համատեղություն	20	1 801 800
Խաչատրյան Լիլիթ Ռոբերտի	Գիտաշխատող	115 100	12	հիմնական	20	1 381 200
Ջանջուղազյան Կարինե Ջոհրաբի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Հովհաննիսյան Հռիփսիմե Իգիթի	Կրտսեր գիտաշխատող	179 900	12	հիմնական	40	2 158 800
Ասատրյան Աննա Թեմանի	Ավագ գիտաշխատող	300 300	12	հիմնական	40	3 603 600
<b>Բաժին</b>						
<b>Հայաստանի ֆլորայի գենետիկական ռեսուրսների պահպանության բաժին</b>						
Ներսեսյան Անուշ Անրիի	Ղեկավար	449 800	12	հիմնական	40	5 397 600
Նավասարդյան Եվգենյա Միխայելի	Գիտաշխատող	225 210	12	հիմնական	30	2 702 520
Ռուդով Ալեքսանդր Վախթանգի	Ավագ գիտաշխատող	300 300	12	հիմնական	40	3 603 600
Քոսյան Հռիփսիկ Բերովի	Լաբորանտ	119 715	12	հիմնական	40	1 436 580
Վարդանյան Սոնյա Մամիկոնի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	համատեղություն	20	1 079 400
<b>Բաժին</b>						
<b>Հնէաբուսաբանության բաժին</b>						
Գաբրիելյան Իվան Գեորգիի	Ղեկավար	449 800	12	հիմնական	40	5 397 600

Պապիկյան Աստղիկ Սարգսի	Կրտսեր գիտաշխատող	0	12	հիմնական	40	0
Հայրապետյան Նարինե Ահարոնի	Կրտսեր գիտաշխատող	179 900	12	հիմնական	40	2 158 800
Գրիգորյան Անատոլյա Արտավազի	Կրտսեր գիտաշխատող	179 900	12	հիմնական	40	2 158 800
Հակոբյան Էլեն Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	179 900	12	հիմնական	40	2 158 800
<b>Խումբ Քարաքոսերի պահպանման խումբ</b>						
Գասպարյան Արսեն Հակոբի	Ղեկավար	174 950	12	ներքին համատեղություն	20	2 099 400
Սարգսյան Ռազմիկ Ռուբենի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	հիմնական	20	1 079 400
Գևորգյան Մարիամ Կարենի	Ավագ լաբորանտ	156 100	12	հիմնական	40	1 873 200
Սարգսյան Նաիրա Ադիբեկի	Ավագ լաբորանտ	156 100	12	հիմնական	40	1 873 200
Սողոյան Եվա Յուրիի	Գիտաշխատող	57 500	12	համատեղություն	10	690 000
<b>Բաժին Բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժին</b>						
Հայրապետյան Ալլա Մկրտիչի	Ղեկավար	449 800	12	հիմնական	40	5 397 600
Հովհաննիսյան Մարինե Էդգարի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Ղուկասյան Անահիտ Գեորգիի	Առաջատար գիտաշխատող	210 000	12	ներքին համատեղություն	20	2 520 000
Օզանեզովա Գոհար Հրանտի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Էլբակյան Արաքսյա Հարությունի	Ավագ գիտաշխատող	300 300	12	հիմնական	40	3 603 600
Սարգսյան Մերինե Վոլոդյայի	Ավագ գիտաշխատող	300 300	12	հիմնական	40	3 603 600
Մուրադյան Ավարդ Հրանտի	Կրտսեր գիտաշխատող	179 900	12	հիմնական	40	2 158 800
Սոնյան Հասմիկ Հովհաննեսի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Ալոյան Արմինե Սուրենի	Ավագ լաբորանտ	156 100	12	հիմնական	40	1 873 200
Ասատրյան Մարիետա Յաշայի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Աշոյան Արփինե Լեոնիկի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Բալայան Կարինե Վալերիի	Գիտաշխատող	0	12	հիմնական	40	0
<b>Բաժին Բույսերի ներմուծման բաժին</b>						
Վարդանյան Ժիրայր Հմայակի	Ղեկավար	449 800	12	հիմնական	40	5 397 600
Մարտիրոսյան Լորա Յուրիի	Ավագ գիտաշխատող	300 300	12	հիմնական	40	3 603 600
Գատրյան Գայանե Մանուկի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Մուրադյան Նելլի Նորիկի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Գրիգորյան Մանիկ Մերուժանի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Ալեքսանյան Նազիկ Գագիկի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Հակոբյան Ժանետա Անդրանիկի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Կարապետյան Արեգ Մեսրոպի	Գիտաշխատող	57 550	12	համատեղություն	10	690 600
<b>Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝</b>						8170200
<b>Ընդհանուր գումար՝</b>						181 366 740

Կազմակերպության տնօրեն՝

Արմեն Հակոբի Գասպարյան  
(ստորագրություն)

Կազմակերպության անձնակազմի կառավարման  
ստորաբաժանման ղեկավար՝

Մուրադ Բախչյան  
(ստորագրություն)



(ԱԱՀ)

Կ. Տ.



ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ\*


«Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգա-աշխարհագրական ասպեկտները» ծրագրի  
 (ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
2024թ. 1-ին եռամսյակ	Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրություն և պահպանություն	Հայաստանի ֆլորայի տաքսոնոմիական, կենսակարգաբանական ուսումնասիրություն; Հայաստանի ծառաբույսերի պալինոմորֆոլոգիական ուսումնասիրություն: Հազվագյուտ տեսակների ցանքսի և ձկնցման համար սերմերի նախապատրաստում: Սերմերի ցուցակի կազմում Բուսաբանության ինստիտուտի ղեկավարի համար:	Մորֆոլոգո-անատոմիական, հերբարիումային, պալինոլոգիական, ցիտոլոգիական երկրաբուսաբանական, էկոֆիզիոլոգիական ուսումնասիրություններ	01.01.2024-31.03.2024
2024թ. 2-րդ եռամսյակ	Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրություն և պահպանություն	Հայաստանի ֆլորայի հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ բույսերի ցիտոլոգիական, էկոֆիզիոլոգիական հետազոտություններ: Հայաստանի բուսականության դասակարգման սխեմայի վերաբերյալ աշխատանքներ: Դաշտային աշխատանքներ էքսպոզիցիոն հողամասում, Տարածքի բարելավում, հավաքածուի գույքագրում: Բուսաբանական այգու ծաղկանոցների ձևավորում և խնամք:	Մորֆոլոգո-անատոմիական, հերբարիումային, պալինոլոգիական, ցիտոլոգիական երկրաբուսաբանական, էկոֆիզիոլոգիական ուսումնասիրություններ	01.04.2024-30.06.2024
2024թ. 3-ին եռամսյակ	Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրություն և պահպանություն	Հերբարիումային նյութի որոշում: Հայաստանի բուսականության դասակարգման սխեմայի մշակման վերաբերյալ աշխատանքներ: Դաշտային աշխատանքներ էքսպոզիցիոն հողամասում, բույսերի խնամք: Մերձարևադարձային և արևադարձային բույսերի գիտական հավաքածուի ընդլայնման ուղղությամբ աշխատանքներ: Բուսաբանական այգու ծաղկաթմբերի խնամք, տնկանյութի հավաք և նախապատրաստում հաջորդ վեգետացիոն շրջանի համար, տարբեր ծաղկային հավաքածուների ստեղծում: Վտանգված տեսակների սերմերի հավաք, վերամշակում և ex situ երկարաժամկետ պահպանություն «Հայաստանի ֆլորայի սերմերի բանկ»-ում:	Մորֆոլոգո-անատոմիական, հերբարիումային, պալինոլոգիական, ցիտոլոգիական երկրաբուսաբանական, էկոֆիզիոլոգիական ուսումնասիրություններ	01.07.2024-31.09.2024
2024թ. 4-րդ եռամսյակ	Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրություն և պահպանություն	Հերբարիումային նյութի ուսումնասիրում: Յեղերի անատոմիական ուսումնասիրության ամփոփում; քրոմոսոմների, ծաղկափոշու հետազոտությունների ամփոփում; Հայաստանի բուսականության դասակարգման սխեմայի մշակման ամփոփում, հաշվետվությունների պատրաստում:	Մորֆոլոգո-անատոմիական, հերբարիումային, պալինոլոգիական, ցիտոլոգիական երկրաբուսաբանական, էկոֆիզիոլոգիական ուսումնասիրություններ	01.10.2024-31.12.2024

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝

  
 (ստորագրություն) (Արսեն Գասպարյան)  
 (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

  
 (ստորագրություն) (Արսեն Գասպարյան)  
 (անուն ազգանուն)

\* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:

### ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգա-  
աշխարհագրական ասպեկտները» ծրագրի  
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական  
բյուջե:

2. Աշխատանքի նպատակը:

Ծրագրի նպատակն է հանդիսանում Հայաստանի ֆլորայի և բուսականության  
ուսումնասիրությունը, դրանց դերը համաշխարհային ֆլորայի ձևավորման ու զարգացման  
գործում, կենդանի հավաքածուների պահպանության էկոլոգո-աշխարհագրական  
ասպեկտների մշակում: Վերջին տարիների բիոսֆերային հետազոտությունները հստակ  
ցուցադրում են բնագիտության ընդհանուր ֆոնդում հնէաբուսաբանական  
(պալեոբուսաբանության) և հնաբուսաբանական (արխեոբուսաբանության)  
հետազոտությունները շրջանառության մեջ դնելու անհրաժեշտությունը, քանի, որ անցյալի՝  
մահացած բույսերի հետազոտումը բացահայտում է նախկին կենսաբազմազանությունը,  
երկրաբանական դարաշրջանների միջավայրի վերականգնման բանալին, ինչպես նաև  
կանխագուշակում ապագա կլիմայական փոփոխությունները:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

Հայաստանի ֆլորայի, բուսականության և բուսական ռեսուրսների հետազոտություն;

- Կովկասի կրիտիկական տաքսոնների կարգաբանական ուսումնասիրում;
- ՀԱԱՀ-ից ստացած հերբարիումի մշակում և ինսերացիա;
- Հերբարիումի թվայնացում և օնլայն հասանելիացում (Global Biodiversity Informacion Facility, Global Plants, JACQ Virtual Herbaria, World Flora Online պորտալների միջոցով);
- Հայաստանի հազվագյուտ տեսակների ադապտիվ պոտենցիալը ըստ կենսաձևերի /խոտ, թուփ, ծառ/ – անատոմիական հատկությունների բացահայտում;
- Հայաստանի ծառատեսակների ծաղկափոշու մորֆոլոգիայի ուսումնասիրություն և տեղեկատվական բազայի ստեղծում, «Հայաստանի ծառերի և թփերի ծաղկափոշու ատլաս»-ի աշխատանքների ավարտում;
- Հայաստանի ֆլորայի Հիրիկազգիների (*Iridaceae*) ընտանիքի ներկայացուցիչների պալինոկարգաբանության ուսումնասիրում;
- Հազվագյուտ և անհետացող, ինչպես նաև արժեքավոր տեսակների վիճակի դաշտային ուսումնասիրություններ;
- Թիրախային բուսատեսակների անհետացման ռիսկի գնահատում ըստ Բնության պահպանության միջազգային միության չափորոշիչների;
- Համաձայն տեսակների անհետացման ռիսկի գնահատման արդյունքների՝ վտանգված տեսակների սերմերի հավաք բնական միջավայրից;
- Վտանգված տեսակների սերմերի *ex situ* հավաքածուների համալրում բաժնի Հայաստանի Ֆլորայի Սերմերի Բանկում



- Մոլեկուլյար հետազոտությունների իրականացում օգտագործելով բաժնի մոլեկուլյար լաբորատորիայի հնարավորությունները;
- Կենսատեխնոլոգիական հետազոտությունների իրականացում օգտագործելով բաժնի *in vitro* կլոնալ միկրոբազմացման լաբորատորիայի հնարավորությունները;
- Վտանգված և արժեքավոր տեսակների կենդանի հավաքածուների ստեղծում և ընդլայնում բաժնի նորաստեղծ «Հայաստանի կենսաբազմազանության տեղեկատվական և էկոլոթական կենտրոնի» հիման վրա;
- Վտանգված և արժեքավոր տեսակների կենդանի հավաքածուների ստեղծում և ընդլայնում;
- Թիրախային բուսատեսակների *ex situ* պահպանության ապահովում;
- Թիրախային բուսատեսակների *in situ* պահպանության բարելավման եղանակների մշակում;
- Հայաստանի բուսական ծածկույթի փոփոխության դինամիկայի ուսումնասիրում՝ գլոբալ և համաշխարհային նշանակություն ունեցող, մասնավորապես էնդեմիկ, հազվագյուտ և ռելիկտային բուսատեսակներ պարունակող էկոհամակարգերի ի հայտ բերման և հետազոտության նպատակով;
- հիմնական անտառային համակարգերի արդյունավետության բարձրացման, բույսերի ներմուծման և կլիմայավարժեցման հիմունքների մշակում;
- Բնակավայրերի կանաչապատման գիտական հիմունքների մշակում: Հայաստանի բուսաբանական այգիները որպես համաշխարհային ֆլորայի ուսումնասիրության և կենդանի հավաքածուների ստեղծման ու պահպանման կենտրոն;
- Արևելյան Ասիայի, Հյուսիսային Ամերիկայի դենդրոֆլորաների, ինչպես նաև *Spiraea*, *Philadelphus* և այլ ցեղերի ներկայացուցիչների ներմուծումը Երևանի բուսաբանական այգի;
- Երևանի բուսաբանական այգու ծաղկային հավաքածուների հարստացումը *Asteraceae*, *Caryophyllaceae*, *Primulaceae*, *Iridaceae*, *Liliaceae* ընտանիքների նոր բարձր գեղազարդ տեսակներով ու սորտերով,
- Արևադարձային ու մերձարևադարձային բույսերի հավաքածուի հարստացումը *Apocynaceae*, *Araceae*, *Crassulaceae* և այլ ընտանիքների նոր ներկայացուցիչներով, Գեղազարդ (ներմուծված միամյա և բազմամյա) բույսերի աճի ու զարգացման վրա կենսաբանական ծագման աճի խթանիչների ազդեցության ուսումնասիրություններ:

40 Աշխատանքի բովանդակությունը:

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի գիտական գործունեության 2024թ. ծրագիրը վերաբերվում է «Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգո-աշխարհագրական ասպեկտները» թեմային, որն անմիջականորեն բխում է ինստիտուտի զարգացման և ռազմավարության ծրագրի հայեցակարգից:

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի կարևոր գիտական ուղղություններն են.

- Հայաստանի ժամանակակից և բրածո բույսերի կարգաբանական և ֆլորիստիկ ուսումնասիրություններ;
- Հայաստանի ֆլորայի տեսակների կենսակարգաբանական (անատոմիական, պալինոլոգիական, ցիտոլոգիական) ուսումնասիրություններ;
- Հայաստանի էկոհամակարգերի նոր դասակարգային սխեմայի վերամշակում, ինչը կարտացոլի ընդունված միջազգային չափանիշներին համապատասխանող հանրապետության բուսականության ներկայիս իրավիճակը;

- Հայաստանի ֆլորայի հազվագյուտ և անհետացող տեսակների էկոլոգո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրություններ;
- Հայաստանի ֆլորայի դժվար ծրող տեսակների բազմացման ֆիզիոլոգիան մեկուսացված կուլտուրայի և սերմային մեթոդների միջոցով;
- Հայաստանի ֆլորայի վտանգված և արժեքավոր բուսատեսակների պոպուլյացիաների գենետիկական պոլիմորֆիզմի ուսումնասիրություններ;
- Հայաստանի ֆլորայի հազվագյուտ տեսակների անհետացման ռիսկի գնահատում ըստ Բնության պահպանության միջազգային միության չափորոշիչների;
- Հայաստանի արիդային տարածաշրջանների բարձր գեղազարդ տեսակներ պարունակող տաքսոնների, ինչպես նաև պարտիզային ձևերի ներմուծմանը, բուսաբանական այգիներում դրանց ցուցադրական էքսպոզիցիոն հավաքածուների ստեղծմանը և հանրապետության տարբեր դենդրոկլիմայական պայմաններում (Երևան, Վանաձոր, Սևան) ինտրոդուցենտների հարմարողականության բնույթի պարզաբանմանը;
- Ինստիտուտի տարբեր գիտական հավաքածուների տվյալների բազայի համալրման աշխատանքների կազմակերպում, կենդանի հավաքածուների համալրում:

Ուսումնասիրելով Հայաստանի ֆլորայի տաքսոններին, տեսակներին, ցեղերին բնորոշ տարբեր հատկանիշները՝ կարգաբանական, մորֆոլոգիական, անատոմիական, կարիոլոգիական, պալինոլոգիական, աշխարհագրական և այլն, հնարավոր է լուծել վիճելի տաքսոնների մակարդակը, որոշակիություն տալ դրանց էվոլյուցիոն ուղղություններին, հասկանալ տաքսոնների ծագումնաբանությունը: Այս գիտելիքները անհրաժեշտ են մոլորակի ֆլորայի զարգացման ուղիները պատկերացնելու համար, որոշելու հանրապետության ֆլորայի կշիռը, ֆլորիստիկական կապերը և կարևորությունը՝ ինչպես տարածաշրջանի, այնպես էլ մոլորակի համար: Այդ կարգի ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս հասկանալ, որ Հայաստանը որպես Հայկական լեռնաշխարհի մի մաս, հանդիսանում է տեսակների բազմազանության և տեսակառաջացման օջախներից մեկը:

**Բարձրակարգ բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժին.**

Հայաստանի ֆլորան իր բազմազանությամբ, տեսակային կազմով, էնդեմիկների մեծ թվով, տարբեր կենսաէկոլոգիական ու կարգաբանական խմբերին պատկանող օգտակար բույսերի հարստությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ողջ աշխարհի բուսաբանների մոտ: Ֆլորայի ուսումնասիրումը հիմք է հանդիսանում ինչպես տեսական, այնպես էլ կիրառական մի շարք գիտությունների՝ անտառագիտության, բուսաբուծության, ծաղկաբուծության, դեղագործության, բնության պահպանության և այլնի համար: Հայաստանի ֆլորայի ուսումնասիրման ենթակա հիմնական առարկան համարվում է բուսաբանության ինստիտուտի հերբարիումը /միջազգային կոդը՝ ERE/: Պարունակելով բազմակողմանի տեղեկատվություն, հերբարիումային հավաքածուն համարվում է բոլոր հիմնարար և կիրառական ուսումնասիրությունների հիմնաքարը: ՀԱԱՀ-ից բերված և ERE հերբարիումում Boraginaceae ընտանիքի չորոշված նմուշների որոշում՝ ERE-ի համար նորությունների հայտնաբերում և այդ ինֆորմացիայի տպագրման պատրաստում: Հայաստանի էնդեմիկ տեսակների հերբարիումային նմուշների թվայնացում և օնլայն հասանելիություն:

- Ավարտական փուլում է Հայաստանի անոթավոր բույսերի որոշիչը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, որոնցում կարտացոլվեն բոլոր նոր տվյալները Հայաստանի ֆլորայի շուրջ 3800 տեսակների վերաբերյալ: Նախատեսվում է *Որոշիչի* երեք լեզվով տարբերակների վերջնական խմբագրում:



- Հայաստանի էնդեմիկ տեսակների ցուցակի ճշտում, ամենահազվագյուտ տեսակների դաշտային ուսումնասիրություններ:
- Նախատեսվող «Հայաստանի ֆլորայի լուսանկարների ատլասի» համար լուսանկարների մշակում:
- «Հայաստանի ծառերի և թփերի ծաղկափոշու Ատլաս-ի» համար նախատեսվում է ամփոփել Հայաստանի ֆլորայի Rosaceae ընտանիքի պալինոմորֆոլոգիական առանձնահատկությունները, ավարտել բանալին՝ կազմված բոլոր ուսումնասիրված տեսակների ծաղկափոշու մորֆոլոգիական տվյալների հիման վրա:
- Կշարունակվեն աշխատանքները կապված Իկոնոտեկայի՝ լուսային և սկաներային մանրադիտակի մակարդակով ծաղկափոշու թվային լուսանկարների հավաքածուի ստեղծման հետ:
- Կշարունակվեն Convolvulaceae ընտանիքի ծաղկափոշու պոլիմորֆիզմի ուսումնասիրությունները՝ ծաղկափոշու ապերտուրային և քանդակի տիպերի էվոլյուցիայի հնարավոր ուղիները բացահայտելու նպատակով:
- Կշարունակվեն Corylaceae և Betulaceae ընտանիքների օրինակով ծաղկափոշու ծլանցքային ապերտուրային տիպերի ուսումնասիրության մեթոդաբանական ասպեկտների մշակում:
- Կամփոփվեն հետազոտություններ «Հայաստանի ֆլորայի Հիրիկազգիների (*Iridaceae*) ընտանիքի ներկայացուցիչների պալինոկարգաբանությունը» ատենախոսական թեմայով:
- Կիրականացվեն կլիմայի փոփոխության հետ կապված՝ մի քանի տաքսոնների տարբեր և նմանատիպ կենսաձևի, մորֆոլոգիայի, ադապտիվ պոտենցիալի հայտնաբերման աշխատանքներ, որպես համեմատվող տեսակներ են նախապես ուսումնասիրված *Berberis* ցեղի տեսակները՝ կարմիրգրքային *Pyrus theodorovi* հետ, ինչպես նաև 2 վտանգված կարմիրգրքային *Nonea polychroma* և *N. rosea* տեսակները:
- Կշարունակվեն Malvaceae ընտանիքի կարգաբանական ուսումնասիրությունները:
- Կիրականացվեն աշխատանքներ "Հայաստանի բուսական աշխարհի հարստությունը" թեմայով զբոսավարների ձեռնարկի տպագրության համար:
- Կավարտվեն "Հայաստանի համեմունքային բույսերը" մենագրության թարգմանչական աշխատանքները:
- Ազրարային Ակադեմիայից ստացած հերբարիումի մշակում և ինսերացիա, ERE հերբարիումի անոթոշ նյութերի որոշում և ինսերացիա՝ Asteraceae (Eupatorieae, Astereae, Inuleae, Heliantheae, Senecioneae, Calenduleae), Boraginaceae, Malvaceae, Poaceae, Rosaceae, Ranunculaceae, Amarantaceae, Polygalaceae, Scrophulariaceae, Crassulaceae ընտանիքներ;
- Հերբարիումի տիպային նմուշների թվայնացում և օնլայն հասանելիացում՝ JACQ Virtual Herbaria և Global Biodiversity Informacion Facility, Global Plants, World Flora Online պորտալների միջոցով;

#### **Հնէաբուսաբանության բաժին**

Բրաժո ֆլորաների ուսումնասիրության ուղղությամբ աշխատանքները կշարունակվեն Սևանի և ՀՀ տարածքի այլ լճերի տորֆային ու հատակային նստվածքների ուսումնասիրության ուղղությամբ, վեր է հանվելու ֆլորայի, բուսականության և կլիմայի զարգացման, ինչպես նաև լճերի մակարդակների տատանումների վերջին 10-12 հազար տարվա պատմությունը:

- Մասնավորապես՝ մենագրության շրջանակներում կամփոփվեն ՀՀ կենսաբազմազանության թեժ կետերից մեկի՝ Սևանա լճի ափամերձ հատվածում գտնվող՝ Ծովինար գյուղի շրջակայքի տորֆային հողոցենյան նստվածքների բրաժո ծաղկափոշու և սերմերի ուսումնասիրման արդյունքները:

- Մենագրության տեսքով կամփոփվեն Հորթունի պլիոցենյան (4-3 մլն տարի հասակի) ֆլորայի ուսումնասիրությունները:
- Մենագրության տեսքով կամփոփվեն Որոտան գետի ավազանի վաղ պլեյստոցենյան (0.9-1.4 մլն տարի հասակի) ֆլորայի ուսումնասիրությունները:
- Կշարունակվեն Դեվոնի հասակի (300-400 մլն տարի հասակի) ֆլորայի ուսումնասիրությունները:
- Կշարունակվեն Խնձորուտի կավճի (70-80 մլն տարի հասակի), Հովքի յուրայի (մոտ 150 մլն տարի հասակի) Վեդու տրիասի (190-200 մլն տարի հասակի) ֆլորաների ուսումնասիրությունները:
- Կշարունակվեն բրածո և ժամանակակից տաքսոնների համեմատական ուսումնասիրությունները, մասնավորապես, Սրնգենու, թխկու, կաղնու, ջրային բույսերի տարբեր տաքսոնների՝ Եղջերատերևիկի, Շերեփուկախտի և այլ տաքսոնների ուղղությամբ:
- Կիրականացվեն “Կարմիր Սարի” արխեոլոգիական տեղավայրի (Արագած լեռան հարավայաց լանջ) հնէաբուսաբանական ուսումնասիրություններ:
- Բրածո բույսերի հավաքածուների ավելացումը տարվելու է ուսումնասիրվող բոլոր տեղավայրերի բույսերի մնացորդներ, դրոշմներ և քարացուկներ պարունակող նմուշների հավաքման, ըստ տաքսոնների որոշման տվյալների բազայի ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես, կնախատեսվեն ստեղծել ինստիտուտի համար նորություն ներկայացնող քարացած բնափայտի հավաքածու՝ համալրելով արդեն եղած նմուշները:
- Ժամանակակից բույսերի հավաքածուների ավելացումը տարվելու է բույսերի տարբեր օրգանների՝ ծաղկափոշու, սերմերի ու պտուղների, տերևների, բնափայտի հավաքածուների հարստացման, նմուշների կարգավորման, տվյալների բազայի ստեղծման ուղղությամբ: Կշարունակվեն Հայաստանի ժամանակակից բույսերի բնափայտավոր տեսակների, ինչպես նաև՝ ջրային ու ջրամերձ տեսակների հերբարիումների հավաքները, որոշումները, եղած նյութի որոշումներն ու վերաորոշումները և ERE հերբարիումի հավաքածուի համալրման աշխատանքները:
- Բուսաբանական այգու Կովկասի տեղամասի հետ աշխատանքները տարվելու են ռելիկտային այգի ստեղծելու ուղղությամբ: Դրա շրջանակներում կշարունակվեն Կովսիդյան և Հիրկանյան Ռելիկտային հատվածների բարելավման ու դրանց ցուցադրության նպատակով երթուղիների ստեղծման աշխատանքները: Կուսումնասիրվեն ռելիկտային մի շարք տեսակների (*Corylus colurna* L., *Hedera helix* L., *Parrotia persica* (DC.) C.A. Mey., *Quercus castaneifolia* C.A. Mey., *Vaccinium myrtillus* L., *Periploca graeca* L., *Staphylea pinnata* L., *Zelkova carpinifolia* (Pall.) Dipp. և այլն) հարմարվողականությունը Երևանի, Վանաձորի ու Սևանի այգիներում: Թանգարանային աշխատանքների շրջանակում կստեղծվեն ժամանակավոր և մշտական նոր ցուցադրություններ:

#### **Հայաստանի ֆլորայի գենետիկական ռեսուրսների պահպանության բաժինը**

ուսումնասիրում է Հայաստանի ֆլորայի վտանգված ներկայացուցիչների վիճակը բնության մեջ, մշակում և կիրառում է դրանց բնության մեջ (*in situ*) և բնությունից դուրս (*ex situ*) պահպանությունը: Բաժնում *ex situ* պահպանությունը իրականացվում է հիմնականում հետևյալ միջոցներով՝ սերմերի և ԴԼԹ-ի պահոցների ստեղծում և զարգացում, բույսերի կենդանի հավաքածուների ստեղծում և ընդլայնում, մեկուսացված հյուսվածքների (կլոնալ միկրոբազմացումը *in vitro*) պահոցի ստեղծում: Դաշտային դիտարկումները և մոլեկուլյար հետազոտությունները նպաստում են գիտական խնդիրների լուծմանը բույսերի տաքսոնոմիայի

և կարգաբանության բնագավառում: *Ex situ* հավաքածուները կայուն հիմք են ստեղծում բույսերի տեսական և կիրառական ուսումնասիրությունների համար՝ առանց ավելորդ միջամտության բնական պոպուլյացիաների մեջ:

- Կշարունակվեն *Lepyrodiclis, Holosteum, Silene, Bufonia, Minuartia (Caryophyllaceae)* և *Malus, Pyrus, Prunus (Rosaceae)* ցեղերի, ինչպես նաև հովանոցազգիների (*Apiaceae*) որոշ ներկայացուցիչների մոլեկուլային և նոմենկլատուրային ուսումնասիրությունները;
- ՀՀ ֆլորայի գիպոֆիտների, հատկապես *Astragalus (Fabaceae)* ցեղի տեսակների ուսումնասիրությունները, կարևորելով մոլեկուլային ուսումնասիրությունը և *in situ* և *ex situ* պահպանության ուղղությունները;
- Կիրականացվեն ՀՀ ֆլորայի 27 տեսակների տարբեր պոպուլյացիաներից սերմերի երկարաժամկետ պահպանություն;
- Կուսումնասիրվեն *Orchidaceae* ընտանիքի ներկայացուցիչների սերմերի երկարաժամկետ պահպանության առանձնահատկությունները  $-20^{\circ}\text{C}$ ,  $-80^{\circ}\text{C}$  և  $+5^{\circ}\text{C}$  տարբերակներով: Վերամշակել սերմերի *ex situ* պահպանության պրոտոկոլը: Վերամշակել *in vitro* պրոտոկոլի աճեցումը և հետագա վերատկումը սուբստրատի մեջ:
- Կվերամշակվեն սերմերի *ex situ* պահպանության կարգը; կիրականացվեն հերթական ծլունակության թեստեր/ ստուգում Հայաստանի ֆլորայի սերմերի բանկի հավաքածուներից:
- Կիրականացվեն ծլեցման աշխատանքներ 3 հազվագյուտ տեսակների սերմերի կարիդոլոգիական ուսումնասիրությունների նպատակով:
- Կկատարվեն տեսակի *ex situ* պահպանություն *in vitro* կլոնալ միկրոբազմացման եղանակով;
- Կիրականացվեն «Էկոէպիկենտրոն»-ի ՀՀ ֆլորայի արոսենիների հավաքածուի համալրում 10 տեսակներով: Կշարունակվեն ներկա 3 մոդելների վերանորոգումը: Կիրականացվեն Էկոէպիկենտրոնի պայմաններում հանրամատչելի դասընթացներ՝ բնապահպանական և կենսաբանական ուղղությամբ;
- Կուսումնասիրվեն *Tamarix (Tamaricaceae)* և *Salix (Salicaceae)* ցեղերին պատկանող տեսակների սերմերի ծլունակության պահպանությունը Հայաստանի ֆլորայի սերմերի բանկի պայմաններում: Այս ցեղերի ներկայացուցիչների սերմերը բնական պայմաններում կորցնում են իրենց ծլունակությունը 20 օրվա ընթացքում: Հարկավոր է ուսումնասիրել համապատասխան գրականություն և կատարել մի շարք փորձեր՝ սերմերի երկարաժամկետ պահպանման կարգ մշակելու նպատակով:
- Կիրականացվեն Հայաստանի ֆլորայի հացազգիներին (*Poaceae*) պատկանող C4 տեսակների, հատկապես վտանգված և մշակովի բույսերի ցեղակիցների դաշտային ուսումնասիրություններ: Կնկարագրվեն պոպուլյացիաների վիճակը *in situ* պայմաններում: Կուսումնասիրվեն 2023 թ. հավաքված սերմերի ծլունակությունը և կենսունակությունը: Կիրականացվեն ծիլերի տնկում Էկոէպիկենտրոնի բիոտոպում, ֆենոլոգո-մորֆոլոգիական ուսումնասիրություններ: Որոշ տեսակների համար կկատարվեն անհետացման ռիսկի գնահատում՝ ըստ IUCN չափորոշիչների:

**Երկրաբուսաբանության բաժին** Նախատեսվում է շարունակել Հայաստանի էկոհամակարգերի և նրանց փոփոխությունների ուսումնասիրությունները: Ուսումնասիրության հիմնական նպատակն է Հայաստանում բացահայտել հազվագյուտ էկոհամակարգերը և ստեղծել Հայաստանի էկոհամակարգերի Կարմիր գիրք: Կշարունակվեն ուսումնասիրություններ էկոհամակարգերի վիճակի գնահատման, գոյության սպառնալիքների պարզաբանման, կլիմայի փոփոխության պատճառով հնարավոր փոփոխությունների կանխատեսման, ինվազիվ

տեսակների տարածման, ինչպես նաև այլ սպառնալիքների գնահատման վերաբերյալ: Լախատեսվում է շարունակել մերձալայան բուսականության ուսումնասիրությունները:

**Բույսերի ֆիզիոլոգիայի** ոլորտում նախատեսվում է շարունակել Հայաստանի վտանգված բուսատեսակների էկոլոգո-ֆիզիոլոգիական և կենսաբանական հարմարողականության համեմատական գնահատումը, խոցելիության հնարավոր պատճառների բացահայտում in-situ պայմաններում և Հայաստանի բուսաբանական այգիներում համապատասխան պայմանների ստեղծում՝ հազվագյուտ տեսակների աճեցման և ex-situ պահպանության համար: Ֆիզիոլոգիական հետազոտությունների հիմքում ընկած են ջրային ռեժիմի (ազատ և կապված ջուր, ջրային անբավարարություն), տրանսպիրացիայի և ֆոտոսինթեզի ինտենսիվության, պլաստիդային պիգմենտների քանակության (քլորոֆիլ ա և բ, կարոտինոիդներ) ուսումնասիրությունները:

**Բույսերի ներմուծման բաժնում** ծառաբույսերի ուսումնասիրությունները կշարունակվեն նվիրված.

- Բարձր գեղազարդ ծառաբույսերի և դրանց պարտիզային ձևերի ներմուծմանը, ինչպես նաև բուսաբանական այգիներում ցուցադրական էքսպոզիցիոն հավաքածուների համալրմանն ու հարստացմանը և հանրապետության տարբեր քաղաքների ու բնակավայրերի կանաչապատման մեջ նպատակային կիրառմանը:
- Կշարունակվեն Հայաստանի քաղաքային կանաչ տնկարկների օպտիմալացմանը, դենդրոկազմի հարստացմանը և գեղազարդության բարձրացմանը նվիրված գիտական հետազոտությունները:
- Աշխատանքներ կիրականացվեն Երևանի բուսաբանական այգու Եդրևանիների էքսպոզիցիոն հավաքածուների հողամասի վերակառուցման և երկարատև գեղեցիկ ծաղկող մանրապուրակի ստեղծման ուղղությամբ:

Ծաղկային 2024թ. ընթացքում կշարունակվեն Հայաստանի ֆլորայի հազվագյուտ գեղազարդ բուսատեսակների ներմուծմանը և կլիմայավարժեցմանը նվիրված ուսումնասիրությունները՝ ծաղկաբույսերի հավաքածուի հարստացման ու ցուցադրման, և հետագայում քաղաքային այգիներում դրանց օգտագործելու նպատակով:

Արևադարձային և մերձարևադարձային բույսերին նվիրված ուսումնասիրությունները կշարունակվեն Երևանի բուսաբանական այգու կոլեկցիոն ջերմատան պայմաններում և նվիրված կլինեն նոր գեղազարդ տաքսոններով համալրմանը, դրանց էկոլոգիական հարմարողականության պարզաբանմանը, ինչպես նաև առավել գեղազարդ ու դիմացկուն տեսակներն ինտերերային կանաչապատման մեջ առաջարկմանը:

Երևանի բուսաբանական այգու «Հայաստանի ֆլորա և բուսականություն» էքսպոզիցիոն հողամասում կշարունակվեն Հայաստանի վայրի և որոշ մշակովի պղատու բույսերի հավաքածուի ստեղծման աշխատանքները: Կիրականացվեն *Malus*, *Prunus* և *Pyrus* (*Rosaceae*) վայրի պտղատու բուսատեսակների և որոշ սորտերի կենսամորֆոլոգիական հետազոտություններ բնության և Երևանի բուսաբանական այգու պայմաններում:

**Քարաքոսերի հետազոտման և պահպանության գիտական խմբում** նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները՝

- Դաշտային հետազոտությունների շարունակական իրականացում, նմուշների հավաք ՀՀ տարածքում,
- Քարաքոսերի և սնկերի նմուշների ԴՆԹ շթրիխ-կոդավորման շարունակական իրականացում,
- Քարաքոսերի մոլեկուլային կարգաբանական և ֆիլոգենետիկ հետազոտությունների շարունակական իրականացում,
- Հայաստանի քարաքոսերի կատալոգի տպագրություն (2023-2024),
- Հայաստանի որոշ քարաքոսերի բնապահպանական կարգավիճակի պարզաբանում և առաջարկում ՀՀ կարմիր գրքում գրանցման նպատակով:



Կազմակերպության  
տնօրեն՝



(Արսեն Գասպարյան)  
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար



(Արսեն Գասպարյան)  
(անուն ազգանուն)